# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

23 ՀՈՒԼԻՍԻ 2024թվական

## ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 8 անդամներ:

Բացակա էին՝ Հարութ Թերզյանը, Արթուր Հովհաննիսյանը, Գոռ Հունանյանը, Եպրաքսի Մալխասյանը, Հրաչիկ Միերյանը, Արմինե Նավասարդյանը, Մյասնիկ Պողոսյան ը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Նորաին Հակոբյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Արայիկ Ավետիսյանը

Լսեցին·

*ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ*

*\/Զեկ. ԷԴԳԱՐ ՄՆՈՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի 2024 թվականի տարեկան բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին համայնքի ղեկավարի հաղորդումը, համայնքի ավագանին **որոշում է՝**

1.Ընդունել ի գիտություն Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի հաղորդումը 2024 թվականի տարեկան բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին ՝ համաձայն հավելված 1-ի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 74-Ն/

Լսեցին

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի , ՀՀ Կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի N 656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, **համայնքի ավագանին որոշում է՝**

Հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի հողային հաշվեկշիռը 2024 թվականի հուլիսի 1-ի դրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից :

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 75-Ն/

Լսեցին
*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 23-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*<sub></sub>/Զեկ. ՆՈՐԱԻՆ ՀԱԿՈԲՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և 65-րդ հոդվածի պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին **որոշում է**.

1.Հաստատել Ծաղկահովիտ համայնքի ավագանու 2024 թվականի հուլիսի 23-ի արտահերթ նիստի օրակարգը՝
2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի հաղորդումը 2024 թվականի տարեկան բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին:
3. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի հողային հաշվեկշիռը սահմանելու մասին: .
4. ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի համայնքապետարանի երկրորդ հարկի սանհանգույցի և երկու աշխատասենյակների վերանորոգման համար գումար հատկացնելու մասին
5. ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Ծաղկահովիտ բնակավայրի մշակույթի տան հիմնանորոգման նպատակով պատվիրված նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ենթարկման և եզրակացության տրամադրման համար գումար հատկացնելու մասին

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 73-Ն/

Լսեցին
*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՏՎԻՐՎԱԾ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՄԱՆ ԵՎ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/*

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով «Խոյանք» ՍՊԸ-ի կողմից Ծաղկահովիտ բնակավայրի մշակույթի տան հիմնանորոգման նպատակով կազմված նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ենթարկելու անհրաժեշտության մասին Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին **որոշում է՝**

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Ծաղկահովիտ բնակավայրի մշակույթի տան հիմնանորոգման նպատակով պատվիրված նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ենթարկման և եզրակացության տրամադրման համար հատկացնել 350.

000 / երեք հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 77-Ն/

Լսեցին

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐԿԻ ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑԻ ԵՎ ԵՐԿՈՒ ԱՇԽԱՏԱՍԵՆՅԱԿՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, ***համայնքի ավագանին որոշում է՝***

1.ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի համայնքապետարանի վարչական շենքի երկրորդ հարկի սանհանգույցի և երկու աշխատասենյակների վերանորոգման համար համայնքի բյուջեից հատկացնել 287. 000 / երկու հարյուր ութսունյոթ հազար / ՀՀ դրամ:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 76-Ն/

Ավագանու անդամներ

ԱՐԾՐՈՒՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ԲՈՅԱՋՅԱՆ

ԲԱՎԱԿԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆՈՐԱԻՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ՂԱԶԱՐՅԱՆ

ՄԻՇԱ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՍՈՒՐԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ

*Համայնքի ղեկավար*

ՆՈՐԱԻՆ ՀԱԿՈԲՅԱՆ________________

Նիստն արձանագրեց՝ Արայիկ Ավետիսյանը ______________________